ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

03.12.2025թ.

ժամը 11:30

Հանձնաժողովի նախագահ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժնի համակարգչային ցանցերի ադմինիստրատոր — Վաղարշակ Թորոսյան

Անդամներ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժնի տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ — Գոռ Հարությունյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պահեստապետ — Արթուր Միքաելյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ — Աղավնի Դարբինյան

---

1. **«ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/35» ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշում կայացնելու մասին.**

Հանձնաժողովը որոշեց՝

1.1 11-րդ չափաբաժնի մասով «Մոնիկ» ՍՊԸ-ն և 18-րդ, 19-րդ, 20-րդ չափաբաժինների մասով «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ն ընտրված մասնակիցներ են ճանաչվել, սակայն սահմանված ժամկետում մասնակիցները համակարգ չեն կցել իրենց կողմից ստորագրված պայմանագրերը ինչպես նաև չեն ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն մասնակիցները զրկվում են պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

1.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ հանձնաժողովը որոշեց.

Առաջարկել պատվիրատուի ղեկավարին «Մոնիկ» ՍՊԸ -ի և «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ:

1.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 11-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Վաղարշակ Թորոսյան	
Անդամներ՝	Գոռ Հարությունյան	
	Արթուր Միքաելյան	
Քարտուղար՝	Աղավնի Դարբինյան	